վեց կողմանի: Ո՞յք են նրանք, ասել չենք կարող հաստատապէս, հաւանօրէն երեք մանկունքներից մէկը եւ Դանիէլ հնոցի մէջ: Ոչ պակաս հետաքրքրական երրորդ երեսի քանդակը, տարաբաղդաբար, աղօտ (Պատկեր 93)· աթոռի վերայ նստած է Աստուածածին Յիսուս գրկին: Չորրորդ երեսը պատուանդանի վերայ խաչի քանդակ է, պսակում եւ թեւերի վերայ մի մի գնդակ, որ յաճախ տեսանք:

Պատուանդանի ձեւի կողմից լաւ է մնացած եւ Ծառայիչէնի կոթողը (Պատկ· 19),



Պատկ· 94

որ գտնւում է Քասախ գետի ձախ ափին՝ Եղիպատրուշ (Տամջըլու) գիւղից ոչ հեռու: Պատուանդանի մի երեսին քանդակուած են հաւասարակող պսակի մէջ առնուած եւ կո-